ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Աշան-Արմ» ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/156 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Աշան-Արմ ՍՊԸ, Ա. Հովհանիսյան ԱՁ, Ա. Ավետիսյան ԱՁ	Գիտելիքի օրվա կապակցությամբ սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների դպրոցահասակ երեխաներին տրամադրելու համար անհրաժեշտ է ձեռք բերել 100 հատ դպրոցական պարագաների փաթեթ (պայուսակ և գրենական պիտույքներ)՝ յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ. ■Պայուսակ – 1 հատ՝ աշակերտական, կարված ամուր, ջրակայուն գործվածքից, էկոլոգիապես մաքուր, առանց յուրահատուկ հոտի, հարմարեցված ձեռքով բռնելու (բռնակ) և ուսին գցելու համար, առնվազն 30-35սմ լայնությամբ և 40-45սմ բարձրությամբ: Պայուսակը դրսից պետք է ունենա առնվազն 2 դարակ՝ ամուր կայծակաճարմանդներով, իսկ աջ և ձախ կողքերին բաց գրպաններ՝ շշով հեղուկ տեղադրելու համար: Պայուսակի ներսի հատվածը պետք է լինի աստառապատված, հետնամասը՝ օրթոպեդիկ: Գույնը՝ սև, մոխրագույն, մանուշակագույն, կապույտ կամ կանաչ: ■Տետր՝ 96 թերթ - 8 հատ (4 հատ տողանի, 4 հատ վանդակավոր)՝ աշակերտական՝ հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց լուսանկարներով կամ միագույն, չափը՝ 16x20սմ, գծված լուսանցքով, տպագրությունը՝ օֆսեթ: ■Տետր՝ 48 թերթ - 8 հատ (4 հատ տողանի, 4 հատ վանդակավոր)՝ աշակերտական, հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի տեսարժան

		վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց լուսանկարներով կամ միագույն, չափսը՝ 16x20սմ, գծված լուսանցքով, տպագրությունը՝ օֆսեթ: ■Տետր՝ 12 թերթ - 10 հատ (5 հատ տողանի, 5 հատ վանդակավոր)՝ աշակերտական, չափսը՝ 16x20սմ, գծված լուսանցքով, տպագրությունը՝ օֆսեթ: ■Գրիչ-5 հատ՝ բարձր որակի, գնդիկավոր, 0.7մմ ծայրով, կապույտ միջուկով: ■Նկարչական ալբոմ – 1 հատ՝ հաստ ստվարաթղթե շապիկով, միագույն կամ նկարազարդ, չափսերը առնվազն 29սմx21սմ, թերթերի քանակը՝ 40 հատ, չափսը՝ A4, հաստ, սպիտակ: ■Գունավոր մատիտ – 1 տուփ՝ նկարչական, պատրաստված փայտից, վեցանկյուն կտրվածքով, 12 գույնի, փափուկ գրվող, երկարությունը ոչ պակաս 18 սմ-ից, ստվարաթղթե նկարազարդ տուփով: ■Սրիչ – 1 հատ՝ սրվող շեղբը հավաքող տարրայով: ■Քանոն – 1 հատ՝ պլաստմասսե, գծաբաժանումներով, երկարությունը՝ 30սմ: ■Ռետին – 1 հատ՝ ռետինե ջնջոց նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար: Նշված բոլոր ապրանքները պետք է լինեն չօգտագործված (նոր): Ապրանքների մատակարարումը և բեռնաթափումը նշված հասցե պետք է կատարվի մատակարարի կողմից: Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքները ենթակա են ետ վերադարձման:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Ашан-Арм» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/156 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		